ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 8, 1963 Общественные науки

Հ. ԻՇԽԻԿԱՑ

# Բ. ԿՆՈՒՆՅԱՆՑԸ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹՈՒՐՔԵՐԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

*Ընթացիկ տարվա հուլիս-օգոստոսին լրանում է ՍՄԿՊ հիմնադրող պարտիայի 2-րդ համագումարի 60-ամյակը։ Մեր երկրում ամենայն խնամքով հավաքվում և մշակվում են հիշյալ պատմական համագումարի մասնակիցների և ընդհանրապես լենինյան գվարդիայի ներկայացուցիչների դրական ժառանգությունը։ Այդ ժառանգության նշանակությունը մեծ է, որովհետև այն տալիս է նախ՝ պատմական դեպքերի և երևույթների մարքսիստական-լենինյան մեկնաբանությունը, և ապա հանդիսանում է ժամանակակիցների, ականատեսների վկայություններ պարունակող հարուստ նյութ։*

*Ահա այս տեսակետից ընթերցողին հետաքրքիր կլինի ծանոթանալ Բ. Մ. Կնունյանցի մի հոդվածի հետ, որը տպագրվել է 1909 թվականի մայիսին* «Бакинские вести»[1] *թերթում* «Р—ъ», *այսինքն՝ Ռադին ստորագրությամբ։*

*Հոդվածը կոչվում է «Թուրքիայի իրադարձությունների շուրջը» և կրում է պոլեմիկ բնույթ։ Նրա նպատակն է եղել պատասխանել ռուսական առաջին ռևոլյուցիայի բուրժուական այն քննադատներին, որոնք ջանք չէին խնայում նսեմացնելու ռևոլյուցիան, նրա պատմական նշանակությունը, նրա ղեկավար՝ բոլշևիկյան պարտիայի ծրագրային և տակտիկական հիմունքները։ Բուրժուական քննադատների գործադրած ձևը տվյալ դեպքում, ինչպես ցույց է տալիս հոդվածի հեղինակը, եղել է՝ համեմատել ռուսական ռևոլյուցիան, նրա պայքարի միջոցներն ու նպատակները երիտասարդ թուրքերի «հեղափոխության» հետ, քննադատելով վերջիններիս թե՛ չափավորության և թե զսպվածության համար։ Մյուս կողմից նրանք ամեն կերպ աշխատել են մեղադրել Ռուսաստանի հեղափոխականներին անղուսպ լինելու, դասակարգային պայքարը հրահրելու և երկիրը պատժիչ ջոկատների ու ռազմադաշտային արդարադատության գործունեության վայր դարձնելու մեջ։ «Մեր բուրժուան կեղծավորությամբ,—գրում է Բ. Կնունյանցը,—ռուսական ռևոլյուցիան և նրա շարժիչ հիմնական ուժը՝ բանվոր դասակարգը արատավորելու հետին նպատակով գովեստներ է շաղ տալիս երիտասարդ թուրքերի հասցեին, որոնք իբր հանճարեղ կերպով տարան ազգային գործը և առանց որևէ «դասակարգային պայքարի և պրոլետարական պահանջների» ազատություն նվաճեցին»[2]։*

*Վ. Ի. Լենինը բացահայտելով նման վերաբերմունքի պատճառները նշում է, որ երիտասարդ թուրքերին գովում են չափավորության և զսպվածության համար, այսինքն «գովում են թուրքական ռևոլյուցիան այն բանի համար, որ*

---

[1] «Бакинские вести» *թերթը լիբերալ ուղղություն ուներ և ռեակցիայի տարիներին օգտագործվում էր բոլշևիկների կողմից։ Բացի Կնունյանցից այնտեղ հոդվածներով հանդես են եկել Պ. Ա. Ջափարիձեն, Ա. Մ. Ստոպանին և ուրիշներ։*

[2] «Бакинские вести», № 1, 4.V.1909.

նա թույլ է», իսկ մյուս կողմից, «գովում են նրա համար, որ հնարավոր է առաջվա նման կողոպտել թուրքական տիրապետությունները»[3]։

Կնունյանցը իր հոդվածում ցույց է տալիս այնուհետև, որ պատմական համեմատությունները ճիշտ չեն, եթե նրանք չեն ելնում կոնկրետ ժամանակաշրջանից և տվյալ երկրի զարգացման աստիճանից ու յուրահատկություններից։

Հոդվածի մեջ առանձնապես ուշադրության արժանի է հեղինակի վերաբերմունքը դեպի սուլթանական Թուրքիան և նրանում տեղի ունեցող քաղաքական դեպքերը։

Արևելքի երկրների և մասնավորապես Թուրքիայի վիճակով, ինչպես նաև ազգային ու գաղութային հարցերով Բ. Կնունյանցը մշտապես հետաքրքրվել է իր կարճատև և բուռն հեղափոխական գործունեության ընթացքում։

Երկար տարիների աշխատանքը Բաքվի բազմազգ պրոլետարիատի շարքերում, անմիջական կապը հարևան երկրների հեղափոխական շարժումների մասնակիցների հետ, վերջապես արևմտյան Հայաստանի ճնշված ու իրավազուրկ վիճակը և հայերի ծանր դրությունը Թուրքիայում նրա մոտ ստեղծել էին որոշակի կարծիք այդ երկրների կացության ու նրանց տիրող շրջանների քաղաքականության մասին։

Այդ են վկայում պարտիայի 2-րդ համագումարին Բաքվի կոմիտեի զեկուցման հետևյալ տողերը.

«Քաղաքական ծանր այն պայմանները,—ասում է Կնունյանցը,—որոնցում ապրում են Թուրքիայում 3 միլիոն հայեր, բարբարոսական հետապնդումները, մասսայական հալածանքները, Փոքր Ասիայում մի քանի անգամ կազմակերպված ջարդերը, չէին կարող չհրավիրել ռուսահպատակ հայերի, մասնավորապես ինտելիգենցիայի ռադիկալ մասի ուշադրությունը»[4]։

Բ. Կնունյանցը այս հարցերի վրա ավելի հանգամանորեն կանգ է առնում հիշյալ «Թուրքիայի իրադարձությունների շուրջը» հոդվածում, որն առաջին անգամ մայրենի լեզվով ներկայացվում է հայ ընթերցողի ուշադրությանը։

Հիշեցնենք, որ այն գրվել է Աբդուլ Համիդին գահընկեց պնելուց մոտավորապես մեկ շաբաթ հետո, երբ երիտասարդ թուրքերը դեռ չէին բացահայտել իրենց քաղաքականությունը և ժողովրդական մասսաները դեռ սպասելիքներ ունեին հեղափոխությունից։

Վիճելով իր ընդդիմախոսների հետ Բ. Կնունյանցը ցույց է տալիս, որ թուրքական ռևոլյուցիան ընթանում է «ավելի պարզ իրադրության մեջ» քան ռուսականը, որ այդ պատճառով առաջինի խնդիրներն «ավելի նեղ էին, որովհետև նեղ էր և ոչ բարդ նրան առաջ բերող կյանքը»։

Արտադրական հարաբերությունների և դասակարգային հակասությունների զարգացման տեսակետից երկու հարևան երկրները ապրում էին միանգամայն տարբեր ժամանակաշրջան։

Ռուսաստանը արդեն ուներ ձևավորված բանվոր դասակարգ, որին գլխավորում էր բոլշևիկների նոր կազմակերպված, բայց պայքարի փորձ ունեցող պարտիան, իսկ Թուրքիան դեռ ապրում էր ֆեոդալիզմի պայմաններում։ «Այնտեղ կապիտալիզմը դեռ նոր է անցկացնում իր առաջին շավիղները... Պետա-

3 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 15, էջ 268—269։

4 Второй съезд РСДРП. Протоколы, Госполитиздат, Москва, 1959, стр. 530.

կան կարգը տիպիկ ասիական բռնապետություն է, ուր սուլթանը, նույն ինքը՝ խալիֆը, հանդիսանում է իր հպատակների կյանքի և գույքի լիիրավ տերը»[5]։ Երկրում նոր էին սկսում ձևավորվել բուրժուազիան ու պրոլետարիատը։ Նշված պայմանների հետևանքով ժողովրդական մասսաների քաղաքական ակտիվության աստիճանը չափազանց ցածր էր. «Ազգարնակչության լայն խավերը՝ գյուղացիությունը և քաղաքային մանր արհեստավորները առայժմ բոլորովին մի կողմ են քաշված հեղաշրջումից և իրենց պահանջներով հանդես չեն գալիս»։ Ամեն ինչ կատարվում է վերևում, պայքարը գնում է գլխավորապես տիրող խավերի միջև։ Տեղին է այստեղ մեջ բերել երիտթուրքերի կենտրոնական մարմնի մի փաստաթուղթը, որտեղ ասված է. «Բոլորին թող հայտնի լինի, որ մենք սահմանադրական կարգերի ժամանակ էլ չենք կարող պատկերացնել մեր գահը առանց ներկայումս տիրապետող դինաստիայի»[6]։ Նման խնդրի իրագործումը իհարկե չէր պահանջում ժողովրդական մասսաների մասնակցությունը։ Հայտնի է, որ այս պատճառով Լենինը կոչել է երիտթուրքական հեղափոխությունը վերնախավային։

Սակայն երկրի ներսում տիրող դրությունից դժգոհ էին թե գյուղացիները, թե մանր բուրժուազիան ու սաղմնավորվող ազգային բուրժուազիան, թե տիրող դասակարգերի որոշ խավերը, և մանավանդ իրավազուրկ ազգային փոքրամասնությունները։

Այսպիսի ընդհանուր դժգոհության պայմաններում էր, որ ստեղծվեց բուրժուական առաջադեմ տարրերի միասնական ճակատ աբդուլհամիդյան ռեժիմի դեմ։

Արևելքի երկրների վերջին մի քանի տասնյակ տարիների յուրահատկությունները նման պայմաններում երևան եկան բավական ցայտուն կերպով։ Շարժման մեջ որոշիչ դեր կատարեց բանակը, հանձինս նրա սպայության։

«Թուրք ազգի ամենակուլտուրական մասը,—կարդում ենք հոդվածում,— որ կազմում է բարձրագույն աստիճանավորությունն ու սպայությունը, որը կանգնած էր ազգի միակ կազմակերպված ուժի՝ զորքի գլուխը, չէին կարող անտարբեր վերաբերվել կայսրության քայքայմանը։ Նրանք դարձան հեղաշրջման ակտիվ ուժը, նպատակ ունենալով Թուրքիան ասիական բռնապետությունից վերածել եվրոպական քաղաքական ռեժիմ ունեցող՝ կոնստիտուցիոն երկրի»։

Կնունյանցը, այնուհետև արտահայտում է այն միտքը, որ հեղափոխությունը, եթե նա ցանկանում է հասնել իր նպատակին, պետք է հենվի ժողովրդի, մասսայական շարժումների և ոչ թե «անհուսալի ուժի՝ զորքի վրա, որը կարող է հենց վաղը ոչինչ չթողնել նրանց (երիտթուրքերի) պառլամենտարիզմի խաղաթղթային շենքից»։

Մեզ թվում է չափազանց էական Բ. Կնունյանցի մի կարևոր դրույթը ևս։ Հայտնի է, որ Օսմանյան կայսրությունը եղել է մի հսկայական բազմազգ պետություն՝ ժողովուրդների բանտ։ Թուրքական տիրապետությունը ամեն կերպ ճնշել և արգելակել է հարստահարված ժողովուրդների տնտեսական, քաղաքական և կուլտուրական զարգացումը։ Աբդուլ Համիդի ժամանակաշրջանում տիրող կարգերը և բարքերը, ազգային փոքրամասնությունների նկատմամբ կա-

---

[5] «Бакинские вести», № 1, 4.V.1909.

[6] И. И. Голобородько, Старая и новая Турция, изд. II, М., 1914, стр. 212.

տարվող կամայականությունները լցրին համբերության բաժակը։ Մյուս կողմից՝ երկրում կապիտալիստական հարաբերությունների զարգացումը բանվոր դասակարգի սաղմնավորումը և բուրժուազիայի ձևավորումը, նրա պարտիաների ստեղծումն ու քաղաքական գործունեության ծավալումը, մանավանդ, ավելի զարգացած ծայրամասերում՝ հանդիսացան ազգային-ազատագրական շարժման զարգացման հիմնական գործոնները։

Սովետական պատմագրության մեջ, որտեղ պատմական օրինաչափությունների զարգացման տեսանկյունից ելնելով ուսումնասիրվել են գլխավորապես իմպերիալիստական երկրների քաղաքականությունը Արևելքի երկրների վերաբերյալ և այս վերջիններիս տիրող շրջանների վերաբերմունքը դեպի իմպերիալիզմը, հաճախ են մոռացվել Արևելքի երկրների ներսում առկա ազգային-ազատագրական շարժումները կամ դրանք դիտվել են որպես իմպերիալիստական պետությունների քաղաքականության հետևանք։ Իրականում այդպես է եղել ոչ միշտ։ Մեր օրերում տեղի ունեցող Ասիայի և Աֆրիկայի նույնիսկ ամենափոքր ժողովուրդների ազգային բուռն զարթոնքը ցույց է տալիս, որ ազգային շարժումների պատմության ուսումնասիրման և դիտական մշակման խնդիրը չափազանց ակտուալ է և հրատապ։

Ինչ վերաբերում է ազգային շարժումներին սուլթանական Թուրքիայում, նրանք իրենց օբյեկտիվ բնույթով ուղղված են եղել միջնադարյան քաղաքական մի անհանդուրժելի ռեժիմի ու ֆեոդալիզմի դեմ։ Նրանց նպատակը օսմանյան բռնատիրության տապալումը, պատմական առումով եղել է միանգամայն պրոգրեսիվ երևույթ։ Իվերջո, այդ շարժումներն էին մեծ ուժ ու թափ տալիս երիտթուրքերի հեղափոխությանը, որը կհասներ ազգայի արդյունքների, եթե վերջիններս նենգորեն երես չդարձնեին իրենց երեկվա դաշնակիցներից և չդառնային նրանց դահիճները։

Կան հեղինակներ, որոնք ամեն կերպ աշխատում են ապացուցել, որ հեղափոխությունը Թուրքիայում զուտ ազգային բնույթ ուներ։ Մինչդեռ փաստերը և ժամանակակիցների վկայությունները հերքում են այդ։ Պոլիս վերադարձած վտարանդի Գրիգոր Զոհրապը 1908 թ. օգոստոսին արտասանած իր կրակոտ ճառերից մեկը նվիրում է երկրի ժողովուրդների միասնական պայքարին։ «Ամեն ազգ,—ասում է նա,—իր ենթարկված տառապանքին չափ մեծ աներկյուղությամբ մը կրակին մեջ նետվեցավ ի նպաստ ընդհանուր ապահովության»։ Այնուհետև նա ցույց է տալիս, որ չնայած տիրող շրջանների անջատողական քաղաքականությանը՝ «հաջորդաբար թուրք, պուլկար, հույն եղբայրներն ալ այդ կրակը նետվեցան»։ Շարժման ղեկավարները դեռևս իրար չողջագուրած, «թուրքերը և հայերը բանտերու գերեզմաններու մեջ ղիրար ողջագուրեցին»[7]։

Ժողովուրդների միատեղ պայքարի նման օրինակների թիվը կարելի է բազմապատկել։

Հեղափոխական շարժման կարևորագույն այս գործոնի վրա է հրավիրում ընթերցողի ուշադրությունը և Կնունյանցը, որի կարծիքով՝ «Թուրքիայի հասարակական կյանքում ամենալուրջ հակասությունները մինչև այժմ առաջ են եկել ազգային բախումներից»։ Նա նկատի ունի մասնավորապես Աբդուլ Համիդի տիրապետության, այսպես կոչված, «զուլումի» ժամանակաշրջանը, երբ

7 Տես «Մուրհանդակ», 2.8.1908 թ., կամ «Երջանիկ տարեգիրք», Իսթանբուլ, 1962 թ., էջ 74։

հասարակական կյանքը իրապես ալեկոծում էին բալկանյան, արաբական, նույն, հայ ժողովրդական շարժումները։

Նույնիսկ երիտասարդ թուրքերի կազմակերպության և հեղափոխական շարժման ղեկավար գործիչների կազմը այդ է արտահայտում, որը չի կարելի հաշվի չառնել հիշյալ շարժման մասին խոսելիս։

Քննադատելով հանդերձ երիտթուրքական շարժումը, նրանց տակտիկան ու քաղաքականությունը, հոդվածի հեղինակը պարզ պատկերացնում է հեղափոխության նշանակությունը Թուրքիայի համար, չի թերագնահատում նրա արդյունքները։

Ռեալ իրականության պարզ պատկերացում ունեցող մարդու ուժեղ տրամաբանությամբ Կնունյանցը գրում է. «Դերեզմանային լռության երկրում, որի վրա այնքան դարեր բարձրանում էր միայն սուլթանական նշանավոր ցիցը՝ ազատ մտածողների գլուխները վրան, այժմ ամեն օր տեղի են ունենում փաստեր, որոնք ժողովրդական մասսաներին դուրս կհանեն անտարբերությունից ու թմրությունից»։

Այնուհետև ռևոլյուցիոն գործչի լավատեսությամբ և զգուշությամբ նա եզրակացնում է. «Երիտասարդ թուրքերի ռևոլյուցիան զարկ կտա օսմանյան ազգի զարթոնքին—սրանումն է նրա պատմական հսկայական նշանակությունը, սակայն ռևոլյուցիան ինքնին դեռ բնավ էլ չի նշանակում արևելյան բռնապետությունից անցումը եվրոպական պառլամենտարիզմին»։

Իրավամբ, Բ. Կնունյանցի այս նախագուշակումը իրականացավ երիտասարդ թուրքերի մռայլ տիրապետության տարիներին։ Արևելյան բռնապետությունը իր վատթարագույն ձևերով շարունակեց գոյություն ունենալ Թուրքիայում, նորանոր դժբախտություններ բերելով թուրք և այլազգի ժողովուրդներին։

Ստորև տալիս ենք Բ. Կնունյանցի հոդվածն ամբողջությամբ։

## Թուրքիայի իրադարձությունների շուրջը

Թուրքերը կեցցե՞ն։ Երիտասարդ թուրքերը, ահա՛ սրանք են իսկական ռևոլյուցիոն պարտիան։ Ինչպես ճարպկորեն նրանք ամեն ինչ սարքեցին։ Լավ խաղ խաղացին՝ ինչպես շախմատի տախտակի վրա։ Եվ այդ ամենը Թուրքիա՛յում՝ ասիացիների ու բարբարոսների երկրում։

Այժմ ամենուրեք այսպիսի բացականչությունների ես հանդիպում։ Ո՞վ ասես չի հիանում երիտասարդ թուրքերով։ Ո՞վ ասես նրանց չի մատնանշում՝ նշավակելու նպատակով հայրենի ռևոլյուցիոներներին, որոնք «ոչինչ անել չկարողացան, այլ միայն Ռուսաստանը դարձրին պատժիչ ջոկատների և ռազմադաշտային արդարադատության երկիր»։

Երիտասարդ թուրքերով անկեղծորեն հիանում են ռևոլյուցիայի կողմնակիցները՝ նրանց գեղեցիկ հաղթանակի մեջ տեսնելով ռևոլյուցիայի շարժման հաջողությունների գրավականը և իր դարն ապրած ամեն բանի մահը։ Եթե մեզանում ռևոլյուցիան պարտված դուրս եկավ, ապա ճնշված Թուրքիայում նա բարձր է պահում ազատության դրոշը։ Մեր բուրժուան կեղծավորությամբ, ռուսական ռևոլյուցիան և նրա շարժիչ հիմնական ուժը՝ բանվոր դասակարգը արատավորելու հետին նպատակով գովեստներ է շաղ տալիս երիտասարդ թուրքերի հասցեին, որոնք իբր, հանձարեղ կերպով տարան ազգային գործը, և

առանց որևէ «դասակարգային պայքարի և պրոլետարական պահանջների» ազատություն նվաճեցին։

Ինչպես միշտ, ամեն ոք իր տեսակետով է մոտենում՝ վերջին ժամանակաշրջանի պատմական այդ խոշոր փաստին և դրանից փաստարկներ է քաղում՝ ապացուցելու այն, ինչ որ իրեն հարկավոր է։

Ըստ էության, նրանցից շատերի համար՝ թքած երիտասարդ թուրքերի վրա, բայց այդպիսի հայտնի իրադարձությունն ինչպես չօգտագործել քաղաքական հակառակորդներին և նրանց անհաճո գաղափարները խայտառակելու համար։

Բայց արդյոք այդքան լա՞վ է թուրքական ռևոլյուցիան, և արդյո՞ք այդքան էլ վատ է ռուս ազատագրական շարժման գործը վերջին տարիներին։

Հարցը չափազանց հետաքրքրական է ներկայիս համար։

Ռուսական ռևոլյուցիայի «փոթորկի և դրոհի» շրջանը, համենայն դեպս նրա այն շրջանը, որն ավարտվեց ստոլիպինյան ռեժիմով՝ արդեն անցած է։ Թուրքական ռևոլյուցիան այդ շրջանը դեռ նոր է ապրում։ Առայժմ դա վերջացավ երիտասարդ թուրքերի փայլուն հաղթանակով։ Թե ինչ կլինի այնուհետև հայտնի չէ։ Բայց այն էլ, ինչ կատարվեց, բավականաչափ նյութ է տալիս համեմատելու և ըմբռնելու համար այդ շարժումներից մեկի պարտության և մյուսի հաղթության պատճառները։

Ռուսական ռևոլյուցիան ճզմվեց սոցիալական վիթխարի այն խնդիրների ծանրության տակ, որ պատմությունը դրել էր նրա առջև։ Այդ խնդիրները ռևոլյուցիան սնուցող կենսական ակունքներն էին, բայց հենց դրանք էլ եղան նրա պարտության պատճառը։ Շահերի ներքին հակասությունը դուրս եկավ այնքան ուժեղ, որ դեմոկրատիայի հաղթանակն անհնարին դարձավ։

Թուրքական ռևոլյուցիան ավելի ուժեղ դուրս եկավ հենց այն բանի համար, որ նրանում բացակայում էին սոցիալական այն ահագին հակասությունները և նրանց առաջադրած խնդիրները, որոնք ծնունդ տվին ռուսական ռևոլյուցիային։ Թուրքական ռևոլյուցիան ընթացավ սոցիալական ավելի պարզ իրադրության մեջ։ Նրա խնդիրներն ավելի նեղ էին, որովհետև նեղ էր և ոչ բարդ նրան առաջ բերող կյանքը։

Այն ժամանակ, երբ ռուսական ռևոլյուցիայի գործող անձերը աղգաբնակության այլազան դասակարգերն էին, Թուրքիայում նման ոչ մի բան չկա և ոչինչ չի լսվում այս կամ այն դասակարգերի բախման մասին։ Բուրժուան և պրոլետարը, խոշոր հողատերերը և գյուղացիները մեր ռևոլյուցիայի ընթացքում աստիճարեղից չէին հեռանում։ Այդ դասակարգերի շահերի բախումը սնունդ էր տալիս ռևոլյուցիային։ Դրանցից մեկի պայքարը իշխանության, մյուսինը՝ հողի, երրորդինը՝ աշխատանքի պայմանների բարելավման, չորրորդինը՝ իր արտոնությունների պահպանման համար, մեկը մյուսի հետ խճճվող շահերի պայքարը ստեղծել էր մի քաոս, որից պետք է ծնվեր բուրժուական Ռուսաստանը։

Բոլորովին այլ պատկեր է ներկայացնում ժամանակակից Թուրքիան։ Այնտեղ կապիտալիզմը դեռ նոր է անցկացնում իր առաջին շավիղները։ Աղգաբնակության ահագին մեծամասնությունը ապրում է բնատնտեսության պայմաններում։ Ամբողջ շրջաններ բնակեցված են քոչվորներով։ Պետական կարգը՝ տիպիկ ասիական բռնապետություն է, ուր սուլթանը, նույն ինքը՝ խալիֆը հանդիսանում է իր հպատակների կյանքի և գույքի լիիրավ տերը։

Թուրքիայի հասարակական կյանքում ամենալուրջ հակասությունները մինչև այժմ առաջ են եկել ազգային բախումներից։

Հին ռեժիմը, բորբոքելով ստրկացված ազգերի ատելությունը, թուլացրել էր պետությունը, որի պահպանմամբ հատկապես շահագրգռված էին Թուրքերը։ Պետության թուլացումը առաջ էր բերել պետությունների միջամտությունը կայսրության ներքին գործերին։ Թուրք ազգի ամենակուլտուրական մասը, որ կազմում էին բարձրագույն աստիճանավորությունն ու սպայությունը, որը կանգնած էր ազգի միակ կազմակերպված ուժի՝ զորքի գլուխը, չէին կարող անտարբեր վերաբերվել կայսրության քայքայմանը։ Նրանք դարձան հեղաշրջման ակտիվ ուժը, նպատակ ունենալով Թուրքիան ասիական բռնապետությունից վերածել եվրոպական քաղաքական ռեժիմ ունեցող՝ կոնստիտուցիոն երկրի։ Զուտ քաղաքական բնույթի ռեֆորմները՝ հեղաշրջման գլխավոր խնդիրն էին։ Ժողովրդական լայն մասսաների որևէ «պահանջները» չխանգարեցին իրականացնելու քաղաքական այդ ռեֆորմները։ Եթե որևէ բան մոռյլեցնում է հորիզոնը, ապա դա ասանձին ազգությունների հենց քաղաքական, ազատագրման մեծ պահանջներն են։

Հասարակական կյանքի չշերտավորված վիճակի շնորհիվ սոցիալական հակասությունների այդ բացակայության մեջ էլ հենց թաքնված է բանակի վրա հենվող երիտասարդ Թուրքերի կոմիտեի քաղաքական պահանջների հաջողության գաղտնիքը։

Երիտասարդ Թուրքերի հաղթանակը Թուրքիայի համար կունենա նույն նշանակությունը, ինչ որ մեր՝ մեծ ռեֆորմների դարաշրջանը։ Նա հարավորություն կտա բուրժուական հարաբերությունների զարգացմանը երկրում։ Նա կնպաստի կյանքի բարդացմանը և այն ժամանակ մենք ականատես կլինենք Թուրքիայում նույն շերտավորմանը, ինչ որ գոյություն ունի մեզանում։ Ազգի «միությունը» կփոխարինվի դասակարգային պայքարով, կկրկնվի Եվրոպային և մեզ, ռուսներիս լավ ծանոթ՝ պատկերը։

Համեմատել կարելի է սոցիալական այնպիսի շարժումները միայն, որոնք տեղի են ունենում սոցիալական միատեսակ իրադրությունների մեջ։ Հենց միայն այն, որ և երիտասարդ Թուրք և ռուս «ազատարարները» ձգտում են սահմանադրության, բոլորովին էլ բավական չէ, որպեսզի կարելի լինի նրանց խորհուրդ տալ գնալու միևնույն ուղիով, և իրենց գործունեության մեջ ունենալու միատեսակ արտաքին հաջողություն։

Ռուսական ռևոլյուցիան, չնայած իր պարտության, հսկայական գործ կատարեց։ Նա ցնցեց ռուսական կյանքը ամբողջ խորությամբ։ Նա նպաստեց բազմամիլիոն գյուղացիության արթնացմանը, նա տեղից շարժեց պրոլետարիատին և նրան դասակարգային պայքարի առաջին լուրջ դասերը տվեց, բուրժուազիային նա մղեց քաղաքական կազմակերպության ուղին, խոշոր հողատերերին ստիպեց համախմբել իրենց ուժերը և կանգնել իրենց արտոնությունները պառլամենտի միջոցով պաշտպանելու ուղու վրա։ Այդ ամենը՝ մեծ պլյուս է մասսաների քաղաքական դաստիարակության համար։ Դեռևս չհասնելով իր անմիջական նպատակին՝ զարգացող բուրժուական հասարակության համապատասխան քաղաքական կարգերի նվաճմանը, ռուսական ռևոլյուցիան հրսկայական չափով առաջ մղեց Ռուսաստանը՝ քաղաքական և սոցիալական հարաբերությունների եվրոպականացման ուղիով։

Թուրքական ռևոլյուցիան առայժմ այդ էլ չի արել։ Նա երկիրը հասցրեց զորքի գերիշխանության, քաղաքական այնպիսի կարգի, երբ ազգը ենթարկվում է զինվորի հրամանին։ Ազգարնակչության լայն խավերը գյուղացիությունը և քաղաքային մանր արհեստավորը առայժմ բոլորովին մի կողմ են քաշված հեղաշրջումից, և իրենց պահանջներով հանդես չեն գալիս։ Երիտասարդ թուրքերը, որոնք հենվում են բանակի վրա, իրենց ամբողջ ուշադրությունը կենտրոնացնում են քաղաքական մի շարք ռեֆորմների վրա։ Նրանք շատ բան են խոստանում։ Թե նրանց ինչ՝ կհաջողվի՝ չգիտենք։ Նրանք հենվում են անհուսալի ուժի՝ զորքի վրա, որը կարող է հենց վաղը ոչինչ չթողնել նրանց պառլամենտարիզմի խաղաթղթային շենքից։ Քանի դեռ ժողովրդական մասսաները անտարբեր են, քանի դեռ սոցիալական խոր պահանջմունքներ չկան, որոնք այդ մասսաներին մղեն պառլամենտի ակտիվ պաշտպանության ուղին, քանի դեռ այդ մասսաները ինքնագործունեության չեն ընտելացել, ժողովրդապետության գաղափարի հաղթանակը կառուցված է խախուտ հիմքի վրա։

Երիտասարդ թուրքերի ռևոլյուցիան զարկ կտա օսմանյան ազգի զարթոնքին—սրանումն է նրա պատմական հսկայական նշանակությունը, սակայն ռևոլյուցիան ինքնին դեռ բնավ էլ չի նշանակում արևելյան բռնապետությունից անցումը եվրոպական պառլամենտարիզմին։

Մյուս կողմից էլ չպետք է թերագնահատել Թուրքիայում տեղի ունեցող իրադարձությունները։ Ինչպիսին էլ լինի թուրքական նոր ռեժիմը, նա այնուամենայնիվ ավելի լավ է Աբդուլ Համիդի ռեժիմից։ Գերեզմանային լռության երկրում, որի վրա այնքան դարեր բարձրանում էր միայն սուլթանական նշանավոր ցիցը՝ ազատ մտածողների գլուխները վրան, այժմ ամեն օր տեղի են ունենում փաստեր, որոնք ժողովրդական մասսաներին դուրս կհանեն անտարբերությունից և թմրությունից։

Հին կարգերը կործանվում են։ Անհասանելին դառնում է հնարավոր։ Ժողովրդի գիտակցությունը այդ ամենը հաշվի է առնում։ Եվ, պետք է հուսալ, հեռու չէ այն պահը, երբ այդ գիտակցությունն իրեն զգալ կտա։ Այդ պահից կսկսվի իսկական ռևոլյուցիան Թուրքիայում։

Այն ժամանակ կարելի կլինի զուգահեռ անցկացնել ռուսական և թուրքական ռևոլյուցիաների միջև։ Տեսնենք, թե նրանք, ովքեր այժմ ռուս ռևոլյուցիաներին ի ցույց են դնում թուրքերին, այն ժամանակ էլ նույնը կանե՞ն[8]։

«Բ—Ե»

---

[8] «Бакинские вести», № 1, 4.V.1909.